

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԻՐՈՂ ՅԵՂԵՐԸ

Քրդական արիւնքի մէջ կայ այն ատիկան լը-
րէժինդրութեան զգացմունքը, որ համեմատու-
թեամբ Ասիայի ուրիշ տարրերի հետ, այդ վայրե-
նի զգացմունքը կարող է տարօրինակ համարուիլ:
Քրդը, որպէս մասնատական և քրդը՝ ամեն
հանգամանքում միակերպ պատրաստ է ձուլուիլ և
միանալ իր ցեղակիցներին և կրօնակիցներին հետ,
բայց երբ ինքիւր թշնամական վրէժինդրութեան
է համարու, քրդը, առանց խորութիւն դնելու
ցեղակցի կամ կրօնակցի մէջ, իր պատել և ինք-
նասիրութեան զգացմունքը պաշտպանելու հա-
մար վրէժինդր է լինում նոյն իսկ իր եղբորից,
իր ամուսնուց:

Քրդական ցեղերի մեծամասնութիւնը տա-
րածված է Թուրքիայի և Պարսկաստանի ա-
մենաապահով տեղերում: Երբեք ցեղե-
րը բաղաձայնակ են և նրանք մէջ ազգի
ընկերակցները, որպէս արհեստագործ և բազմամարդ
Հէյդաբադի և Ջալալի կոչված ցեղերն են, ո-
րոնք աւելի խիտ բնակված են սահմանադիմե-
րում, մասնաւոր Պարսից և Թուրքաց սահման-
ներում, Մասիս սարից ակօսած մինչև Հաղբաշի
կողմերը: Քրդական այս կիսաթաղանթի ցեղերը ա-
մեն մի հանգամանքում իրար արիւնքի են ծարա-
ւան մի հանգամանքում, երբ նոյն իսկ դէպքը
ծագում է ամենափոքր պատճառներից, երբ վեր-
ջապէս ամենափոքր չափով տեղի է ունենում
պատել, կամ ինքնասիրութեան զգացմունքի հա-
կառակ գործողութիւն: Բաւականա՞նք միայն
հետեւեալ օրինակով: Հէյդաբադիցից մի ան-
հատ գողանում է վերջին ժամանակներում Ջա-
լալիցիցից մինչև եղբ կամ ոչնչաբար, վերջինը,
որպէս զիւցադական (աշեր) ցեղ, այդ վերին
աստիճանի ամօթը չը կարողանալով տանել, փո-
խադրածաբար նոյնը կրկնում է, այնպէս որ փո-
խադրած գողութիւններից յետոյ, տեղի են ունե-
նում և սպանութիւններ: Հետզհետեւ ընդարձակ-
վելով, գործը արդէն շատ լարված թշնամական
դիրք է ստացել: Հէյդաբադիցիների առաջնորդ
և ցեղապետ (էլազափ), Միքա-բէգն է, իսկ Ջալա-
լիցիները՝ Ահմադ-բէգն է: Թէ Միքա-բէգն
և թէ Ահմադ-բէգն ունեն իրանց համակողմ առան-
ձին-առանձին քրդական ուրիշ ցեղեր: Եւ ահա
այս երկու ցեղապետները օրերումս հրատարակել
են իրար դէմ պատերազմ: Երկու ցեղապետներից
իւրաքանչիւրը իր կուսակիցներով հանդերձ՝ կազ-
մում են 5—6 հազարից աւելի հողիներից բաղ-
կացած բանակներ: Գիտ պատերազմը չը սկսած
տակաւելի երկու կողմերն էլ սպասում են իրանց
հետեւորդ կուսակիցների օգնութեան և երկու
կողմերն էլ շարունակ ձեռք են բերում արագ
գործող, վերջին տեսակի կատարելագործված
հրացաններ:

Սխալ է, եթէ կարծում են, որ քրդը ցեղերի
իրար մէջ ծագած այդ տեսակ անողորմ պատե-
րազմների ժամանակ նոյն երկիրների քրդաօրէնայ
խաղաղ աղբաբնակութիւնը աւելի ապահով վի-
ճակ տիրել վայելէ: Այդ տեսակ պատերազմների
հետեւեալը, ընդհակառակը, շատ ցատկայէ է լի-
նում թէ Պարսկաստանի և թէ Թուրքիայի քրդա-
տոնականների համար:
Պատերազմի ժամանակ ցեղերից իւրաքանչիւրը
անշուշտ իր զգալի կորուստները կունենայ, ոչ
թէ միայն սպանված մարդկանց կողմից, այլ և
զոյքի, տաւարի, ոչնիւրների, յափշտակված կա-
նանց կողմից և այլն... Եւ ահա այն ցեղը, որն
աւելի կորուստներ կունենայ, անպատճառ կը
սկսի լրացնել իր կրած վնասները, իր ունեցած
կորուստները՝ հարեան քրդատոնեայ աղբաբնա-
կութիւնը աւելի էլ կողոպտելով: Երկու կողմից կա-
րելի է, թէ ինչ չարքներ, ինչ ճնշումներ են ա-
ռաջանում, երբ պատերազմից յետոյ քրդական
յաղթված ցեղը տուն է վերադառնում սոված,
ջարդված: Քրդը ցեղը կուտում, պատերազմում է
մի այլ քրդը ցեղի հետ, իսկ նոյն երկրի քրդա-
տոնեայ աղբաբնակութիւնն է, առօրինակ երկու
պատերազմից կողմերի կրած կորուստները:

Մ. Զ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ
Բ. Կուրը թոյլատրեց 9000 չէքլէրներն դադիլ
և բնակութիւն հաստատել փոքր-ասիական լեռ-

նային շրջաններում, այն է խարպուտի, Կօնիի,
Աղսոնայի և Սիվասի շրջաններում:

—Մայրաքաղաքի լրագիրներից մէկին հեռա-
գրում են Վիեննայից, թէ անտեղի քաղաքական
շրջաններում առանձին նշանակութիւն են տալիս
գերմանական կայսրի Ռուսաստան դնելուն:

—Բէլգրադից Վիեննայի «Neues Tageblatt»
լրագիրն հեռագրում են հետեւեալը. «Կառավար-
չական շրջաններում հաւատացնում են, որ իբր
թէ սերբիական կառավարութիւնը մտադրութիւն
ունի Կ. Պօլսից յետ կանչել սերբիական դեսպան
Ստեփան Նովակովիչին, եթէ Բ. Կուրը կը հրա-
ժարվի բաւարարութիւն տալ Պրիշտինի փոխ-հիւ-
պատուի սպանութեան համար»:

—«Presse» լրագրի էրզրումի մի թղթակից
գրում է, որ քրիստոնեաների և մասնատականների
ատելութիւնն այդ քաղաքում ծայրայեղութեան է
հասել: Միջավաճառները, որոնք բացառապէս
մասնատականներ են, վաճառում են թունաւոր-
ված մրգեր քրիստոնեաների վրա: Այդ փաստը
հաստատված է բժշկական հետազոտութեամբ և
այժմ քրիստոնեաներից ոչ մէկը չէ վստահանում
մրգի ուտել և կերակրի մէջ մրգի գործածել:
Բաղաւորապէս, հայթոխները մեծ մասամբ քրիս-
տոնեաներն են, եթէ ոչ քրիստոնեաները սովից
կը կոտորվէին»:

—Բանդուկների գործադուլը Սլաւոնայում մեծ
չափեր է ստանում: Մանրեղայից, ուր միանգամից
10.000 բանդուկներ գործադուլ արին, շարժումը
տարածվեց ամբողջ կատարելաբար Բարցէլոնում
գործարանների և գործատուների մեծ մասը փակ-
ված է: Կատարելաբար և Մալազայի գործարանա-
տերը միաձայն յայտարարեցին, որ չեն կարող
կատարել բանդուկների պահանջները: Կատարելա-
բար դետեղված զօրքերին օգնական զօրքեր են
ուղարկված, որոնք հրամանատար նշանակված է
մարշալ Մարտինէ-Կամպուս:

—Ֆրանսիական մի քանի բժիշկներ այս օրերս
յայտարարեցին, որ աղբաբնակական զգացմունքը
չէ թող տալիս իրանց մասնակցել Բէրլինում
չուտով կայանալի բժշկական միջադպրակի կոն-
գրէսին: Մի և նոյն ժամանակ նրանք առանձնա-
պէս մասնացոյց էին անում Ֆրանսիայի մասին
Վիլիսով յաճախակի արտայայտած թշնամա-
կան զգացմունքների վրա: Սկսվեց վիճաբանու-
թիւն: Վիլիսով յայտնեց, որ իր մի քանի մտերմ
սխալ են հողակցել, և որ ինքն, որպէս գերմա-
նական աղբաբնակ, չէր կարող ի հարկէ, չը հա-
մակցել 1871 թ-ի անցքերին, բայց ինքն միշտ
յարդիլ է և յարգում ու համարում է Ֆրանսիա-
կան ազգի նման առաջնակարգ ազգ: Այդ գոր-
ծին միջնորդեցին Ֆրանսիական ուրիշ բժիշկներ
և և սկսեցին ապացուցանել Ֆրանսիական բը-
ժշկական թիւնի ներկայացուցիչների մասնակցու-
թեան անհրաժեշտութիւնը Բէրլինի կոնգրէսին:
Ֆրանսիական մամուլը կարծիքներ երկուսի բա-
ժանկցան. մէկ մասը պահանջում էր, որ Ֆրան-
սիական բժիշկները չը մասնակցեն կոնգրէսին:
միւս մասը անպատակաբար մար և անքաղա-
քավարի էր համարում այդպիսի վարմունքը:
Վերջ է վերջոյ ինքն բժշկապետ Գիւշար, որ յա-
րուցել էր այդ վիճաբանութիւնը, յայտնեց թէ
ինքը կերթայ Բէրլին: Ֆրանսիայի ներկայացու-
ցիչների մասնակցութիւնը բժշկական կոնգրէսին
այժմ վերջնականապէս վճռված է:

—Ինգլիզի «Times» լրագիրն Վիեննայից
հեռագրում են յուլիսի 12-ից, որ Ռուսաց և
պարսից կառավարութիւնների մէջ կայացած հա-
մաձայնութեան հիման վրա, չուտով Թէհրանում
կը բացվի Ռուսաց միջադպրակ մի բանի: Այդ
բանից լրագրութիւն կունենայ բանալ իր բա-
ժանկցանքները պարսից դաւառական քաղաքնե-
րում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 20 յուլիսի: Պատրիարք Անդրեան
հրաժարեց իր պաշտօնից, հիմնովում այն բանի
վրա, որ հայոց եկեղեցու անբաւարար դրութեան
մասին սուլթանին արած իր բոլոր առաջադրու-
թիւնները մնացել են առանց ուշադրութեան:

ԲԵՐԼԻՆ, 21 յուլիսի: Վիլհելմ կայսրը երկի
«Հօֆեցցըն»-ն առավ Վիլհելմադաֆէլտի ուղևոր-
վեց Օստենդո՝ քեղեքական թագաւորական դոյզնի
այցելելու համար:

ՍՕՅԻԱ, 21 յուլիսի: Տարածայնութիւններից

խոյս տալու համար բողոքական կառավարիչնե-
րը հրաժարվեցան պահեստի զօրքը դիմաւարժու-
թեան կանչելուց:

ԼՕՆՈՆ, 21 յուլիսի: Բերլինի և Վիեննայի
մէջ վերջին օրերս հեռագիրների մեծ փոխանա-
կութիւն է լինում Բօլցարիայի վերաբերմամբ:
Ենթադրում են, որ ի նկատի ունեն թէ Ռուսաս-
տանի և թէ Աւստրիայի համար համահասարակ
գոհացուցիչ համաձայնութիւն կայացնել:

ԲԵՂԳՐԱԴ, 21 յուլիսի: Հակառակ այն լուրե-
րին, որ Միլանի նախաձեռնութեամբ հաղորդված
են եւրօպական մամուլին, միտրօպօլիտը հաղոր-
դում է, որ եկեղեցական օրէնքով թագաւորա-
կան ապահարգանք կնխակայ է բացառապէս ե-
կեղեցական ժողովին: Ապօրինի գործաւարու-
թեան պատճառով լուծելով ապահարգանք, ժո-
ղովը յանձնել է թագուհուն այդ մասին բոլոր
քահանայապետների կողմից ստորագրած ակտը:
Միտրօպօլիտի կողմից Միլանին տուած դօկումէնտը,
որով խոստացվում է չը յարուցանել հարցը ըստ
էութեան, չէ հակասում ժողովի վճռի և բոլոր-
վին չէ ոչնչացնում նրա ոյժը, կրելով դուռ մաս-
նաւոր բնաւորութիւն:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 22 յուլիսի: Հրատարակված է
Բարձրագոյն հրովարտակ զինուորական միւնիստրի
անուամբ, նրա օֆիցերական աստիճանի մէջ 50
տարեկա ծառայութեան աւելթով: Թագաւոր կայ-
սրը շնորհաւորելով միւնիստրին, մասնացոյց է ա-
նում նրա գործունէութեան վրա՝ այն օրից, երբ
նա իբրեւ օֆիցեր մտաւ Ֆինլանդական վարդապե-
տական գունդը մինչև Թագաւորական զինուորի
զորաբանակի շտաբի վրաստար նշանակելու: Այս
հրովարտակի մէջ ասված է. «Այնտեղ, Բօլցարիա-
յի դաշտերի վրա, որի ազատութեան համար
Ռուսաստանն այնքան դիտարկութիւններ է արել,
չառ օրերի ընթացքում պատերազմական գործակ-
ցութեան մէջ, իս առաջին անգամ անձամբ ծանօթա-
ցայ ձեր բնաւորութեան յատկութիւնների հետ,—ա-
մուր, ուղղամիտ և ոչ-չորոքող,—և հնար ունեցայ
գնահատել ձեր գերազանց ընդունակութիւնները,
զինուորական գործի ընդարձակ հմտութիւնը, և
անյողոք ու եռանդուն հաւատարմութիւնը ծա-
ռայութեան պարտաւորութիւնների մէջ: 1881
թ-ին նշանակելով ձեզ զինուորական միւնիստրի
պաշտօնում, և ձեզ յանձնելով պետական վարչու-
թեան ձեռնարկը ամենանշանաւոր և իմ սրտին
մօտիկ մի ճիւղը, իս հաւատացած էի, որ ձեր մէջ
կը գտնեմ մի այնպիսի անձնաւորութիւն, որ կա-
տարելապէս ընդունակ է հասկանալ և իրաւոր-
ծել իմ նախադիմելը: Մեր հայրենիքին անկաս-
կած հարկաւոր է զօրեղ և բարեկարգ զօրք, զին-
ւորական գործի զարգացման ժամանակակից բար-
ձրութեան վրա կանգնած, և այն ոչ թէ նուա-
ճումներ անելու նպատակով, այլ միմիայն Ռուսաս-
տանի ամբողջութիւնը և պետական պատիւը
պաշտպանելու համար: Պաշտպանելով խաղաղու-
թեան թանգաղթն բարեկեցիկը, որոնց իս, Աստու-
ծու օգնութեամբ, յոյս ունեմ երկարատեւ դարձնել
Ռուսաստանի համար, որի զինուորական ոյժերը
պէտք է զարգանան և կատարելագործվեն պետա-
կան կեանքի միւս ճիւղերի հետ համահասարակ
կերպով, չը դուրս գալով այն միջոցների սահմանից,
որոնք ստացվում են աղբաբնակութեան աճելուց
և պետական պայմանների բարեկեցիկուց: Այդ-
պէս են եղել միշտ իմ իսկական դիտարկութիւն-
ները և նախադիմելը, որոնց հաւատարմ և տա-
տաղանդաւոր կատարող էք եղել իմ տարեկա ըն-
թացքում: Ձեր գործնական հայացքը զինուորական
խնդիրների և զօրքի պէտքերի վրա, ձեր հոգատար ու-
շադրութիւնը զինուորական վարչութեան բոլոր ճիւ-
ղերի գործունէութեան վերաբերմամբ, ձեր հմուտ-
թիւնը և զինուորական անասութեան ընդարձակ
գործերի խնայող զեկաւարութիւնը, վերջապէս
ձեր անձնական անխնայ ջանքերը և եռանդը—
կարճ ժամանակամիջոցում շատ առաջ մղեցին
մեր զինուորական ոյժերը, մասնաւոր նրանց պա-
տերազմական պատրաստութիւնը, և որ ամենա-
միթիթարականն է, հասցրին լուրջ հետեւանքների,
առանց արտակարգ միջոցների դիմելու, և ա-
ռանց ծանրաբեռնելու պետական ֆինանսները
ոյժից բարձր ծախսերով: Հրովարտակի մէջ հա-
ղորդում է, որ միւնիստրը մտքոված է ֆինլան-
դական լէյբ-գվարդիայի գնդի ցուցակը: Խաղա-
նի վրա Նորին Մեծութեան ձեռքով գրված է.
«Սրտանց շնորհակալ և ձեռն անկեղծօրէն սիրող
Ալեքսանդր»:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 22 յուլիսի: Չինուորական միւնիս-
տրը նշանակված է պատուաւոր նախագահ զին-
ւորական—բժշկական ակադէմիայի և պատուաւոր

